ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20.10.2021 *Ք. Իջևան*

Նախագահ՝ Կ. Պ. Պողոսյան

Քարտուղար՝ Վ. Ա. Աղաբաբյան

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 24 անդամներից 21-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում: (Զեկուցող՝ Կ. Պողոսյան)
2. 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին: (Զեկուցող՝ Կ. Պողոսյան)
3. Ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաների հաստատում: (Զեկուցող՝ Կ. Պողոսյան)
4. Մասնաճյուղից բավարարվածության ուսանողական հարցման արդյունքների մասին: (Զեկուցող՝ Կ. Պողոսյան)
5. Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ Կ. Պողոսյանը ներկայացրեց 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփումը: Նա

նշեց, որ լուծարքային շրջանը կազմակերպվել է ժամանակացույցին համապատասխան, խախտումներ և բացթողումներ չեն արձանագրվել:

Զեկուցողը նշեց, որ քննաշրջանին մասնակցել է 284 ուսանող: Անբավարար գնահատականներ են ստացել 29 ուսանողներ, որոնցից 1 անբավարար ստացել է 15 ուսանող, 2 անբավարար՝ 4 ուսանող, 3 և ավելի անբավարար՝ 10 ուսանող: Լուծարքային շրջանին մասնակցած ուսանողների գերակշիռ մասը դրական գնահատական են ապահովել 1-ին լուծարքային շրջանի ժամանակ: Զեկուցողը ըստ կուրսերի ներկայացրեց լուծարքային շրջանի ընդհանուր պատկերը.

«Պատմություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 2 ուսանող, որոնցից -ը մեկն ունեցել է 1 առարկաներից անբավարար գնահատական, իսկ մյուսը՝ երկու առարկայից անբավարար: Նրանք դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 4 ուսանող: Մեկ ուսանող անբավարար գնահատական է ունեցել 1 առարկայից, մեկը՝ 2, իսկ երկուսը՝ երեք և ավելի առարկաներից: Նրանցից 2-ը 1-ին լուծարքային շրջանում ստացել են դրական գնահատականներ: «Հոգեբանություն» կրթական ծրագրի I կուրսի մեկ ուսանող այլ բնակավայր տեղափոխվելու և քննություններին չմասնակցելու պատճառով հեռացվել է մասնաճյուղից:

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 1 ուսանող: Նա անբավարար գնահատական է ունեցել մեկ առարկայից և դրական գնահատական է ստացել 1-ին լուծարքային շրջանում:

«Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 14 ուսանող: Նրանցից 8-ը անբավարար գնահատականներ են ունեցել մեկ առարկայից, 2-ը՝ երկու առարկայից, 4-ը՝ երեք և ավելի առարկաներից և դրական գնահատականներ են ստացել 1-ին լուծարքային շրջանում:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրով լուծարքային շրջանին մասնակցել է 7 ուսանող: Նրանցից 4-ը անբավարար գնահատականներ են ունեցել մեկ առարկայից, 3-ը՝ երեք առարկայից: Ուսանողներից 5-ը դրական գնահտական են ստացել 1-ին լուծարքային շրջանում:

«Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրով բոլոր ուսանողներն ստացել են դրական գնահատականներ:

Ֆակուլտետի բացարձակ առաջադիմությունը կազմել է 89.79 %:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., ասիստենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ, դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննություններ-ի նախապատրաստական աշխատանքները նախօրոք կազմակերպվել են: Զեկուցողը փաստեց, որ առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերը ժամանակին տրամադրվել են ուսանողներին: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Ստուգվում է ծրագրերի կատարողականը և դրան համապատասխան՝ մատենավարության վիճակը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետում կան Քովիդ-19-ով վարակված ուսանողներ: Վերջիններս, առողջական խնդիրներից ելնելով, չեն կարողանա մասնակցել ընթացիկներին, և հիվանդությունը հավաստող փաստաթղթի ներկայացման դեպքում նրանց համար կկազմակերպվեն լրացուցիչ քննություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, պ.գ.թ. Դ. Թինոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

2. Ուսումնամեթոդական վարչություն ներկայացնել առողջական խնդիր ունեցող ուսանողների ցուցակները՝ կիսամյակի ընթացքում լրացուցիչ քննություններ կազմակերպելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցող, ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը ներկայացրեց ֆակուլտետում ուսուցանվող կրթական ծրագրի կողմից տրված ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաները: Նա նշեց, որ գիտական ղեկավարների կողմից առաջադրված թեմաները նախապես քննարկվել են ամբիոններում, համապատասխանում են գիտականության չափորոշիչներին, արդիական են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների ղեկավարները նշեցին, որ ամբիոններում քննարկվել են թեմաների վերնագրերը, հստակեցվել ներկայացվող պահանջները:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2021-2022 ուստարվա ավարտական աշխատանքների և հետազոտական բաղադրիչների թեմաները:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Նա ներկայացրեց, որ ՄԿՈԱ բաժնի կողմից ուսանողության շրջանում իրականացվել է 2020-21 ուստարվա մասին հերթական հարցումը՝ մասնաճյուղից բավարարվածության վերաբերյալ: Հարցումը եղել է բազմաբովանդակ և վերաբերել է ուսումնական գործընթացին և դրան օժանդակող տարբեր բաղադրիչների: Կ. Պողոսյանը նշեց, որ ֆակուլտետի ուսանողների

մասնակցությունը հարցմանը կարելի է գնահատել բավարար: Ըստ կրթական ծրագրերի՝ ամենացածր մասնակցությունն ունեցել են «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրով սովորող ուսանողները (33%), որը միգուցե պայմանավորված է ուսանողների փոքր թվով և ոչ բավարար իրազեկվածությամբ:

Հարցերին տրված պատասխաններից կարելի է եզրակացնել, որ որոշ կրթական ծրագրերի ուսանողների մեջ բավական թիվ են կազմում նրանք, որոնք մասամբ են ծանոթ իրենց կրթական ծրագրի բովանդակությանը և կրթական ծրագրի ղեկավարի աշխատանքին: Դեկանը այդ իրողությունը մտահոգիչ համարեց: Նա նշեց, որ այս հանգամանքը խոսում է այն մասին, որ կրթական ծրագրերի ղեկավարները պետք է մտածեն առավել արդյունավետ աշխատելու մասին: Ընդ որում, ՄԿՈԱ բաժնի հարցման մեջ առանձին կետ կա ուսումնական խորհրդատուի աշխատանքի մասին, բայց արդեն մի քանի տարի է, որ ուսումնական խորհրդատու չկա, և այդ գործառույթն իրականացնում են կրթական ծրագրի ղեկավարները: Ուստի հարկավոր է հարցումներից հանել այս կետը:

Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ ուսանողների մեջ բավական մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր անտարբեր են մասնաճյուղի էլ. կայքի և ֆեյսբուքյան էջի կողմից տարածվող տեղեկատվության նկատմամբ: Մյուս կողմից՝ տեղեկատվությանը մասնաճյուղի լրատվությամբ հետևող ուսանողները գոհունակություն են հայտնում կայքի հարմարավետության, տեղեկատվության լիարժեքության և նորությունների լուսաբանման վերաբերյալ:

Կարևոր հանգամանք է, որ տարեցտարի ավելանում է այն ուսանողների քանակը, որոնք օգտվում են մասնաճյուղի գրադարանից (նաև՝ էլեկտրոնային)՝ նշելով գրականության քանակի և որակի նկատելի փոփոխությունը:

Դեկանն առանձնացրեց հատկապես բաց հարցումների կարևորությունը, որոնք նպաստում են ուսանողների ուսումնական կարիքների վերհանմանը, նրանց կողմից մտահոգիչ համարվող հարցադրումների բարձրաձայնմանը, տարաբնույթ առաջարկների հնարավորությանը:

Որպես դիտողություն՝ դեկանն ընդգծեց, որ ամբիոններից վերոնշյալ հարցման վերաբերյալ դիտողություններ, առաջարկներ, արձագանքներ չեն ստացվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ. Դ.Թինոյանը, պ.գ.թ. Ն. Գրիգորյանը, բ.գ.թ. Վ. Աղաբաբյանը, ասիստենտ Է. Թեմրազյանը, Մ. Ասիլյանը, Ս. Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Մասնաճյուղից բավարարվածության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքներն ընդունել ի գիտություն:

2. Ընթացիկ ուսումնական տարում առավել նպատակաուղղված դարձնել կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքը՝ կարևորություն տալով հաշվետվողականությանը, մշտապես ուշադրության կենտրոնում պահել ուսանողների առաջարկները, որոնք միտված են ուսումնական գործընթացի բարելավմանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Կ. Պողոսյան
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Վ. Աղաբաբյան